Երկրորդ՝ Յանձնաժողովոյդ են պարտք ջան ի գործ արկանել վախճան դնելոյ անտեղի գժտութեանց և ընդհարմանց պաշտօնէից դաստիարակութեան համազգի մանկանց յանձնիւր շրջանակս պարտաւորութեանց նոցին և եթէ գոն ինչ թերութիւնք ի հրահանգս կանոնաց Թեմական տեսչաց, նախընթաց գիտութեամբ Առաջնորդաց սահմանեսցին որոշ կանոնք գործողութեանց, իրաւանց և պարտուց նոցին և առաջարկեսցին ի վաւերացումն Մեր։

Երրորդ՝ պարտ ի վերայ Յանձնաժողովոյդ դնի ի միտ առնուլ զամենայն պէտս ծխական եկեղեցական ուսումնարանաց Մերոց և փոյթ ունել մեծապէս հայթայթելոյ հնարս առ ապահովութիւն վիճակի համայն արժանաւոր դաստիարակաց և առ բարգաւաճումն ուսումնական և բարոյական յառաջադիմութեան եկեղեցական ուսումնարանացն ըստ արդի պահանջից մանկավարժութեան, և զոր ինչ ունիցի յայսմ մասին տնօրինել Յանձնաժողովդ՝ պարբերաբար զեկուցանել ի գիտութիւն Մեր և ի բարենկատողութիւն։

Եւ չորրորդ՝ որ ինչ առ յարաբերութիւնս Յանձնաժողովոյդ ընդ այլոց հաստատութեանց, պատուիրեմք դմին զամենայն խնդիրս առաջարկեալս ի քննութիւն և ի տնօրինութիւն Յանձնաժողովոյդ մտադիւր ի քննին առեալ արձանագրել ի կանոնաւոր գումարման ժողովոյ անդամոցդ և յետ կազմելոյ և առաջի առնելոյ զօրագրութիւնս նորին ի հաստատութիւն Մեր՝ տնօրինել զոր ինչ արժանն է մի միայն ընդ ձեռն Թեմական առաջնորդաց, ընդ որս և եղիցի հանապազ պաշտօնական հաղորդակցութիւն դորին յամենայն ի խնդիրս Ուսումնարանական Վարչութեան։

Մաղթելով ի գլուխ Ձեր և գործակցացդ զօրհնութիւն Յիսուսի երկնաւոր խնամողին մանկանց՝ յարգինաւորել ի Ձեզ զգեղեցիկ անկեղծութիւն Մեր, մնամք յաւէտ աղօթարար վասն սիրեցեալ ազգիս Մերոյ և յառաջադիմութեան նորին և Ձեր՝

ՄԿՐՏԻՉ

ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի 17 Հոկտեմբերի 1895 ամի
եւ յազգային Թուականութեանս ՌՅԽԴ.
ի Հայրապետութեան Մերում ԳՐ. ամի
յԱրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
ի Վաղարշապատ.
Համար 798.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ.

1. *Քաջալերեցարուք ես եմ...* . Կ. Վ. . 559
2. *ԱՂՕԹՔԸ Տրտմութեան փարատ. Թարգմ.* . . . *Պատրիկ.* . 570
3. *Քրիստոնէական ճարտարապետութեան սկիզբը* . . *Բարկէն.* . 574
4. *ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ* 576
5. *Եկեղեցական մամուլը* 581

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ.

6. *Բանաստեղծութիւն* . . *Յ. Յովհաննիսեան* 585
7. *Սասանեան Տէրութեան պատմութիւն Թ. Նէօլտէքէի..* *Թարգմ. Ն. Ք.* . 585
8. *ՄՈՎՍԷՍ Կաղանկատուացւոյ աղուանից պատմութիւն .... (Շարունակելի)* *Խաչիկ Վ.* . 588

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ.

9. *Մատենախօսութիւն.* . *Կ. Վ.* . . 590
10. *Պրոֆ. Փետտէրի հրատարակ.* *Կ. Վ.* . 592
11. *Հաւասարակշռութիւն մարմնական եւ հոգեկան աշխատ. Թարգմ.* *Գ. Ս.* . 594
12. *ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԸԿԱՆ.* . *Ն. Ք..* . 596
13. *Հայ Գասպարը* . . *Ս. Հայկունի* . 597
13. *ՄԱՆՐԱՎՈՒՐՔ* 561

ԱԶԴԱՅԻՆ.

14. *Դպրոցական Վարչութիւն* 401

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՑԱՍՏԱՆԵԱՑ . . 402

ՄԱՅՐ ԱԹՈՌ. . . . .

Հեռագիրներ . . . .

1. *ՌՈՒՍԱՀԱՅՔ* . . . . . .
Երեւանի թեմ . . . .

3. *ՏԱՃԿԱՀԱՅՔ* . . . . . .

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՑԱՒԵԼՈՒԱԾ ԱՐԱՐԱՏԻ

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՅԱՒԵԼՈՒԱԾ «ԱՐԱՐԱՏԻ 1895 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄՍԻ.

—

ԹՈՒՂԹ ԿՈՐՆԹԱՑՒՈՑ ԱՌ ՊՕՂՈՍ.

Ստեփաննոս և որք ընդ նմա երիցունքն, Դափնոս և Քսենովն, առ Պօղոս եղբայր ողջոյն։ Արք ոմանք Բ. եկին ի Կորնթոս, Սիմոն անուն և Կղեերոս, որք կործանեցին քաջ քաջ զոմանց հաւատըս, հրապուրողս և ապականել բանիւք. յորոց բանից վերա դու ինքնին պարտիս հասանել. Զի

մեք ոչ երբէք ի քէն լուաք այսպիսի բանս և ո՛չ ի յայլոց առաքելոց, Այլ այսչափ գիտեմք, եթէ որ ինչ ի քէն լուաք և որ ինչ ի նոցանէն, հաստատուն պահեմք, Բայց յայսմիկ յոյժ ողորմեցաւ տէր, զի մինչդեռ դու մարմնովդ ընդ մեզ ես, միւսանգամ ի քէն լուիցուք, Արդ գրեա՛ դու առ մեզ, կամ ինքնին առ մեզ վաղվաղակի եկեսջիր. մեք հաւատամք ի տէր, թէ որպէս յայտնութիւն ցուցաւ Թէովովնիա, եթէ փրկեաց զքեզ տէր ի ձեռաց անաւրինին, Եւ են բանք նոցա մոլար, զոր ասեն և ուսուցանեն այսպէս. չէ պարտ, ասեն, զմարգարէսն ընդունել, և ոչ Աստուած ասեն ամենակալ, և ոչ ասեն յարութիւն մարմնոց և ոչ ըզմարդն ասեն ստեղծել յԱստուծոյ, և ոչ ի կուսէն Մարիամա ծնել ասեն զՅիսուս Քրիստոս մարմնով և ոչ զաշխարհս արարած ասեն Աստուծոյ, այլ հրեշտակաց ուրումն, Արդ, եղբայր, փոյթ յանձին կալջիր հասանել առ մեզ, զի առանց գայթակղութեան կայցէ քաղաքս կորնթացոց և նոցա յիմարութիւնն յայտ յանդիման ամենեցուն խայտառակել մերժեսցին, Ողջ լեր ի տէր,

Առին տարւոյն զթուղթն սարկաւագքն ի քաղաքնփիլիպեցոց· Թերիպտոս եւ Եւտիքոս: Իսկ իբրեւ առ զայն թուղթն Պօղոս, թէպէտ եւ ինքն ի կապանս էր վասն Ստաթոնիկեայ Պողոփանի կնոջն, սուգ էառ վասն բանիցն զոր լուաւ եւ ասէ լալով· իբրեւ զի լաւ էր ինձ, եթէ վախճանեալ էի եւ ընդ Տեառն էի, քան թէ աստէն սովին մարմնով եմ եւ զայսպիսի բանս եւ զաղէտս լսեմ վարդապետութեան, զի տրտմութիւն ի տրտմութեան վերայ հասանէ աւաղիկ, եւ յայդչափ տարակուսանաց վերա կալ ի կապանս եւ տեսանել զայդ աղէտ տ..րակոյս՝ առ ոտս ընթացեալ մեքենայից սատանայի: Եւ այսպէս բազում չարչարանաւք առնէր պատասխանի:

ԵՐՐՈՐԴ ԹՈՒՂԹ ԿՈՐՆԹԱՑԻ.

Պօղոս կալանաւոր Յիսուսի Քրիստոսի առ եղբարս կորնթացիս ի բազում վրիպակէս ողջոյն, Ես ոչինչ կարի զարմացեալ եմ թէ այդչափ վաղվաղակի ընթանան հրապոյրք չարին. այլ զի տէր Յիսուս Քրիստոս վաղվաղակի արասցէ զգալուստ իւր, վասն այնոցիկ, որ փոփոխեն և անարգեն ըզպատուիրանս նորա, Այլ ես ի սկզբանէ զայն իսկ ուսուցի ձեզ, որ ես ինքնին ընկալայ յառաջնոց առաքելոցն, որ զամենայն ժամանակս ընդ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի շրջէին, Եւ արդ ասեմ զի Տէր Յիսուս ի Մարիամա ի սր. կուսէ ծնաւ, որ էր ի զաւակէ Դաւթի, ըստ աւետեաց Հոգւոյն սրբոյ առ ի հաւրէ յերկնից առաքելով ի նմա. զի յաշխարհ մտեսցի Յիսուս և ազատեցուսցէ զամենայն մարմին իւրովն, զի զմեզ յարուսցէ ի մեռելոց, որպէս եցոյց զանձն իւր աւրինակ, Եւ զի յայտ լիցի, եթէ մարդն ի հաւրէ ստեղծաւ, վասն այսորիկ և ի կորստեան իւրում մարդն անխնդիր չմնաց, այլ խնդրեցաւ, զի ի ձեռն որդեգրութեանն կենդանասցի, Քանզի Աստուած, որ ամենայնի տէրն է, հայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ արար զերկինս և զերկիր՝ առաքեաց առ հրէայսն զմարգարէսն, զի ի մեղաց անտի նոցա զնոսա կորզեսցէ և հանցէ յարդարութիւն իւր, Զի կամէր նա փրկել զտունն Իսրայէլի, բաշխեաց արկ նա ի հոգւոյ անտի ի վերա մարգարէիցն, որ զանմոլարն աստուածպաշտութիւն և զծնունդն Քրիստոսի քարոզեցին ժամանակաւք բազմաւք, Իսկ որ անաւրէն իշխանն էր, իբրև աստուածանալ կամեցաւ, ձեռն արկանէր ի նոսա և զամենայն մարմինն մեղաւք կապէր, Քանզի և դատաստանք աշխարհիս մերձեալ էին, Աստուած ամէնակալ իբրև արդարացուցանել կամեցաւ, և ո՛չ կամեցաւ խոտել զիւր ստեղծուածն, իբրև ետես չարչարեալ՝ ողորմեցաւ, և առաքեաց նա ի վախճան ժամանակի զհոգին սուրբ ի կոյսն, յառաջագոյն նկատեալ ի մարգարէիցն, Որ իբրև սրտի մտաւքն հաւատաց, արժանի եղև յղանալ և ծնանիլ զտէր մեր Յիսուս Քրիստոս. զի կորստական մարմնովն, որ հպարտացեալ յարգի լինէր չարն, նովին մարմնովն կըշտամբեալ յանդիմանեսցի, եթէ չէր իսկ Աստուած, Զի ի մարմին անդր իւր Յիսուս Քրիստոս կոչեց և փրկեց զկորստական մարմինն և ձգեց զնա ի կեանսն յաւիտենից ի ձեռն հաւատոցն, զի արդարութեան տաճար սուրբ յիւր մարմին անդր լինելոց ժամանակաց պատրաստեցէ. յոր և մեք իբրև հաւատացաքն ազատեցաք, Արդ գիտասջիք, եթէ ոչ են նոքա որդիք արդարութեան, այլ որդիք բարկութեան, որ զողորմութիւն զթութեան Աստուծոյ կործանեն յանձանց իւրեանց, Եւ ասեն, թէ ոչ են երկինք և երկիր և ամենայն արարածք ձեռագործք Աստուծոյ հաւր ամենայնի, Այլ նոքա անիծեալ զաւձին ուսումն ունին, բայց դուք զաւրութեամբն Աստուծոյ ի բաց մերժեցարո՛ւք ի նոցանէն և զխոտոր վարդապետութիւն նոցա ի բաց հալածեցէք, զի ո՛չ էք դուք որդիք անհնազանդութեան, այլ մանկունք էք սիրեցելոյն եկեղեցւոյ, Վասն որոյ ժամանակն յարութեան քարոզեցաւ ընդ ամենեսեան, Այլ որ ասեն, թէ չիք յարութիւն մեռելոց, նոքա իսկ ոչ են յառնելոց ի կեանսն յաւիտենից, այլ ի դատապարտութիւն, զի ի դատաստանս յարիցեն ի մեռելոց թերահաւատ մարմնովքն. զի զմարմին, զոր ասեն, թէ չիք յարութիւն, նոցա մի՛ լիցի յարութիւն, զի այնպիսիքն ի յարուցելոյ անտի ուրացեալք գտանին, Նոյնպէս

և դուք՝ արք կորնթացիք՝ գիտացէք ի ցորենոյդ սերմանէ և յայլոց սերմանց. զի հատ մի լոկ մերկ անկանի յերկիր և անդ ի խոնարհ նախ մեռանի՝ ապա յառնէ կամաւք Տեառն ի նոյն մարմին և ըզգեցեալ. ոչ եթէ լոկ նոյն մարմին մէկին յառնէ՝ այլ բազմապատիկ տոհմականաւ կանգնեալ և աւրհնեալ։ Այլ մեզ պարտ էր ոչ միայն ի սերմանեաց անտի զառակս բերել ի մէնջ՝ այլ և զպատուականս յիմաստնոց մարդկանէ։ Դուք ինքնին գիտէք զյունան որդի Ամաթիա՝ վասն զի յամառեաց նա քարոզել Նինուէացոցն՝ ընկլաւ նա ի պորտ ձկանն զերիս տիւ և զերիս գիշերս՝ և ապա յետ երից աւուրց լուաւ աղաւթից նորա Աստուած՝ ած ի վեր ի ներքին անդընդոց անդ՝ և ոչինչ ապականեցաւ ի մարմնոյ անդի և ոչ արտեան մի կորացաւ և ոչ մազ մի ի մարմնոյ նորա թափեցաւ. որչափ ևս առաւել վասն ձեր՝ թերահաւատք՝ եթէ հաւատասջիք դուք ի Տէր Յիսուս Քրիստոս՝ յարուսցէ զձեզ որպէս ինքն յարեաւ։ Զի եթէ ոսկերքն եղիշա ի վերայ մեռելոյն անկեալ յարուցին զմեռեալն՝ դուք որչափ ևս առաւել՝ որ յարիւն և ի մարմին և ի հոգի Քրիստոսի յեցեալ էք՝ յայնմ աւուր յարիջիք ողջ անդամք մարմնովք։ Իսկ Եղիա մարգարէ զորդի այրւոյն զմեռեալն յարոյց՝ զի գիրկս արկ և յարոյց. որչափ ևս առաւել Յիսուս Քրիստոս և զձեզ յարուսցէ յաւուր յայնմիկ՝ որպէս ինքն իսկ յարեաւ ի մեռելոց ողջանդամ մարմնովն։ Ապա եթէ այլ ինչ ի տարապարտուց ընդունիք՝ աշխատ ոք ինչ զիս յայսմհետէ մի արասցէ՝ զի ես զկապանս զայսոսիկ յանձին իմում կրեմ՝ զի զՔրիստոս շահեցայց՝ և կոտանաց մարմնոյ այսմիկ համբերեմ՝ զի յարութեանն մեռելոց արժանի եղէց. և դուք իւրաքանչիւր որպէս ընկալարուք զաւրէնս ի ձեռն երանելի մարգարէիցն և սուրբ աւետարանին և հաստատուն կալջիք՝ վարձս ընկալջիք ի յարութեանն մեռելոց և զկեանս յաւիտենից ժառանգեսջիք։ Ապա թէ թերահաւատ ոք լինիցի յայոցանէ՝ դադաստան անձին իւրում նիւթէ՝ ընդ չարագործս և ընդ այնոսիկ՝ որ զայնպիսի առաջնորդութիւն մոլորութիւն մարդկան ունին. զի նոքա իսկ են ծնունդք իժից և կաւրիւնք աւձից քարրից։ Մերժեցարուք՝ ի բաց մեկնեցէք ի նոցանէ դաւրութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ Եղիցի ընդ ձեզ խաղաղութիւն և շնորհք անդրանկին սիրելոյ՝ Տէր ընդ ձեզ ամենեսին. Ամէն։

—

Գիրք՝ զոր ունին հրէայքն ի ծածուկ՝ այսոքիկ են. Ադամայ՝ Էնովքա՝ Սիբելայ՝ ԲԺ. Նահապետացն՝ Աղաւթքն Յովսեփա՝ Վերացումն Մուսիսի՝ Եղդադ և Մոլդադն. Սաղոմոնի սաղմոսքն՝ Եղիսի ծածուկքըն՝ Դանիէլի Է—երորդ տեսիլն՝ Իսկ ըստ նորոյս՝ Գիրք մանկութեան Տեառն՝ Թոմայի աւետարանն՝ Յայտնութիւն Պետրոսի Գ.՝ Շրջագոյ Պաւղոսի՝ Կաթուղիկէ Թուղթքն Բառնաբա և յովսեպի և Թաւմայի։

Սրբոյն Կղեմա՝ եթէ ո՞ր Գիրք ընդունել է. — Գործքն և կանոնք առաքելոցն՝ Յայտնութիւն Յոհաննու որ կոչի պիլալիմսիս. Խրատ Աստուածածնին առաքելոցն. Գիրքն Դիոնեսիա Աթենացւոյ. Տիմոթեայ Թուղթն. Գիրքն կրիսպոսի. Բանքն Յուստոսի. Քարոզ ուղղափառացն. Թուղթն Բառնաբայ՝—Զայս ես եւ Անանէ գրեցաք ի վիմն քաղաքի՝ որ եկեղեցի աւրհնեցաք։

Սրբոյն Նեազրիա կարգաղրութիւն Աստուածաշունչ տառիցն՝ Արարածքն Ե. Յեսուն Գ. Թագաւորութիւնքն Դ. Սաղմոսքն. Սգաւնութիւն. Սիրաքն՝ Յոբն՝ Երկոտասանքն՝ Եսային՝ Երեմիայն՝ Դանիէլն՝ Եզեկիէլն՝ Աւետարանքն Դ. Կտակքն՝ Առաքեալն ԺԵ. Կաթուղիկէքն Է. Աստուածաշունչ։

Սրբոյն Նիւղի Երուսաղէմի հայրապետի կարգաղրութիւն.— Ա.Յ.Ի. — Ծնունդքն. ԲԻՐ. Բ. Ելքն. Գ—Ղ. Ղևտիկոնն. Դ—ԻՐ. Դ. Թիւքն. ՀԻ. Ե. Երկրորդ աւրէնքն. Վ — Ջ. Յեսու որդի Նաւ. ՂԻ. Է. Դատաւորքն և Հռութն. ԻԻՐ Ը. Ա. և Բ. Թագաւորութիւնքն. ՏԻՐ. Ր. Գ. և Դ. Թագաւորութիւնքն՝ Յ—Դ (որդ). Ի. Ա. և Բ. Մնացորդքն. Բ—ԻԻ. Ա. և Բ. Եզրն. Ղ—ՌԻՐ. ԻԲ. Եսթերն՝ Սոփերոն՝ Գիրք Ե. ԱԻՐ. ԻԻ. Յոբ. Ղ—Ն. ԻԴ. Սաղմոսքն Ա—ՌՐ. ԻԻ. Սգաւնն. Ի. ԻԸ. Էկկլէսիաստէսն. ՓԻ. ԻԻ. Աւրհնութիւնք աւրհնութեանցն. Ն—ԴԻ ԻԸ. Երկոտասանքն. Կ—Ի ԻՐ. Եսային. ՐԻՀ. Ի. Երեմիայն ՀՐ. Ի—. Եզեկիէլն. Թ—. ԻԲ. Դանիէլն՝—Դ. Աւետարանքն՝ Գործքն՝ Ի. Կաթուղիկէքն ԻԴ. Թուղթըն Պաւղոսի՝—Յ՝ԻԻ— Ի Բ—Ի Բ—ՐԻԲ—Ի Յ— ՂԻԲ Վ—ԴԴ—։ (*)

* Վերջին խօսքերն եղծուած են եւ դժուարընթեռլի։